# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»

**պետական ոչ առևտրային կազմակերպությունը աշխատանքի է հրավիրում**

## ԱՆԳԼԵՐԵՆ ԵՎ (ԿԱՄ) ՌՈՒՍԵՐԵՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ

**Պարտականությունները.**

- կատարելու է իրավական ակտերի, ազգային զեկույցների, դատական ակտերի և այլ առանցքային փաստաթղթերի գրավոր թարգմանություններ (հայերեն-ռուսերեն և (կամ) հայերեն-անգլերեն լեզվազույգով)

**Պահանջվող որակավորումը և հմտությունները.**

- թարգմանչական գործի, լեզվաբանության, իրավագիտության կամ հարակից այլ բնագավառի բարձրագույն կրթություն,
- թարգմանչական գործունեության աշխատանքային փորձ,
- **ռուսերենի և (կամ) անգլերենի գերազանց իմացությունը պարտադիր է,** այլ օտար լեզուների իմացությունը կհամարվի առավելություն,
- իրավական ակտերի թարգմանության բնագավառում փորձը կհամարվի առավելություն,
- բանավոր թարգմանությունների բնագավառում փորձը կհամարվի առավելություն,
- թարգմանչական գործընթացին օժանդակող թարգմանության ավտոմատացված համակարգերի/CAT Tools (օր. SDL Trados և այլն) իմացությունը, դրանցից օգտվելու հմտությունները, ինչպես նաև համապատասխան սերտիֆիկացման առկայությունը կհամարվի առավելություն,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

**Աշխատավարձը**՝ մրցակցային:

**Աշխատաժամանակը**՝ լրիվ կամ կես դրույք (ազատ գրաֆիկով աշխատանքի համար խնդրում ենք չդիմել):

**Դիմումը ներկայացնելու համար պահանջվող փաստաթղթերն են՝**

1. կենսագրական՝ հայերենով կամ համապատասխան օտար լեզվով (անգլերեն կամ ռուսերեն),
2. բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն, իսկ ուսանողների պարագայում՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից տեղեկանք,
3. նույնականացման քարտի պատճեն կամ անձնագրի և սոցիալական քարտի պատճեն (բացակայության դեպքում՝ տեղեկանքի պատճեն)
4. երաշխավորագիր/բնութագիր նախկին աշխատավայրից և (կամ) բարձրագույն ուսումնական հաստատությունից, առկայության դեպքում:

Փաստաթղթային փուլն անցած դիմորդները կմասնակցեն գրավոր թեստավորման (լեզվի իմացություն, թարգմանչական հմտություններ), իսկ թեստավորման արդյունքում ամենաբարձր միավորներ ստացած դիմորդները կհրավիրվեն հարցազրույցի:

Փաստաթղթերի ընդունման **վերջին ժամկետն է՝ 11.12.2015թ**.:

Փաստաթղթերն ուղարկել **mzargaryan@translation-centre.am** էլեկտրոնային հասցեով կամ ներկայացնել «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ՝ Հալաբյան 41ա հասցեով, ժամը 10:00-ից մինչև 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից: